

եւրոպական ամէն մշակութիւն զրկուած էր, աւելի հաւանական է քան ազդեցութիւն մը, որ մեզի անձանթ ուղիով եկած ըլլայ՝ (23)։ Ազդեցութեան հարցն այս կերպ լուծելէ յետոյ, դժուար է անոնց համեմատական հնութիւն մը չընծայել, մանաւանդ որ տեղւոյն արհեստաւորներն հնութեան նպաստաւոր վկայութիւն տուած են, խոստովանելով որ I—V կտորներու նուրբ արուեստն արդէն մոռացութեան մատնուած է իրենց մօտ։

Հ. Ս. Կ.

ԹԷՔՍՊԻՐԻ ՀԱՅՐԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

(Շարունակութիւն է Գրքի)

Կան Համլէտի եւս երկու հայերէն թարգմանութիւններ, Սենքերիմ Արծրունու՝ ռուսերէն/ց հապճէպով կատարած թիւ համար եւ փափազանի՝ մի խտելիքենտ Զմեռնացի հայ վաճառականի, որոնց հետ Մասէհեանի թարգմանութիւնը աւելորդ ենք համարում համեմատել, Գրանք փորձեր են, լաւ ձգտումներէ մեմատել, Գրանք փորձեր են, լաւ ձգտումներէ բխած, բայց նպատակին չհասած, որովհետեւ թարգմանիչները զուրկ են այն տուեալներից, որոնք թոյլատրելի են դարձնում մերձեցում Շէքսպիրի թարգմանութեան։ Արծրունու թարգմանութիւնը ամբողջովին արձակ է կատարուած, իսկ փափազանի թիւն է տուել իրեն միայն Համլէտի միջի թատերախաղը թարգմանել բանաստեղծական չափով, որը լաւ կը լինէր եթէ բնաւ արած չլինէր։ Գորանով նրա թարգմանութեան պակասութիւնների խորութիւնը մի փոքր նուազած կը լինէր։

Սոսկ միայն գաղափար տալու այդ մասին նրա թարգմանած այդ հատուածից բերենք մի նմուշ, որին կցենք նոյնը Մասէհեանի թարգմանութիւնից.

Մթագին խոհեր, բազուկներ ծորտար.
Առիթն ապաքէն է կարի ի դէպ,
Ուրիշ արարած չք կայ հանդէպ
Գարշելի խարնուրդ գիշերահաւար,
Յոռի խոտերէ երկցս նշաւակ
Երկցս հէքեթէ նզովք առած թոյն,
Քո դիւթական ոյժ, եւ ժանտ յառկութիւն
Քաջառողջ կեանքեր թող քանդեն իսկոյն։

Թարգմ. Մասէհեանի.

Խորհուրդներ խաւար եւ ձեռքեր ծարպիկ եւ
թոյներ ազդու,
Ոչ մի արարած իբր ականատես, եւ ժամ ձեռնտու

Դու դժիւժ խառնուրդ, կէս գիշերային խոտերից քամուած
Եւ նեկատէի անէծքով նիւթած, երկցս նեխուած,
Բնական թովիչ —, մահառիթ ոյժդ թող շուտ
ներդործէ
Արշաւէ իսկոյն առողջ կեանքի վերայ աւերմունք դործէ։

Վերջաւորենք մեր յօդուածի Համլէտի թարգմանութեան վերաբերեալ հատուածը առաջի պատահած կտորով, ցոյց տալու համար թէ որքան բանաստեղծական, միաժամանակ պարզ եւ ճկուն կերպարանք է ստացել մեր լեզուն Մասէհեանի թարգմանութեան մէջ։

Թարգմանի (Համլէտին).

Դու ի՞նչ ունիս դու, որ աչք ես յառել դատարկութեանը
Եւ խոսակցում ես աննիւթ օդի հետ։
Աչքերիդ միջից օդիդ խուժում է վայրենի թափով
Եւ փողի ձայնից քրնից վեր թռած գինուորների պէս,
Պառկած մողերդ, կարծես կեանք առած,
Ցցւում են կանգնում արմատների վրայ։
Օհ քաղցրիկ զաւակ, յուզմունքիդ տապի եւ բոցի վերայ
Սառն համբերութիւն պէտք է սրակես։ Այդ ո՞ր ես նայում։

Համլէտ.

Նրան, այ, նրան. տես, ինչպէս գունատ աչք է ուրում.
Իր տեղքն ու դատը, եթէ քարերին քարոզ կարգային,
Նրանց զգայուն կը դարձնեն։ — Մի նայիր վրաս։
Մի գուցէ քո այդ գթասրտութեամբ
Փոխես իմ դաժան որոշումները. եւ այն ժամանակ,
Իմ անելիքը թափուր կը լինի իսկական գոյնից,
Արցունքներ գուցէ, փոխանակ արեան։

* * *

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ Շէքսպիրը բոլոր գրողներից ամենից շատ բառ է գործածել, մինչ օրինակ չունեցող թիւ՝ 16.000 բառ։ Վճիռ եւ պարզ լեզուով նրան թարգմանելը պահանջում է լեզուի խորը եւ լայն տիրապետութիւն եւ ճշակ։ Այս տեսակետից հետաքրքիր է բաղդատել Մասէհեանի լեզուն մեր բանաստեղծներից ոմանց լեզուի հետ, մանր բանաստեղծներից ոմանց լեզուի գեղեցկութիւնը փնտռում են արուեստական բառաշինութեան կամ գրաբարի պեղումների մէջ, շատ

անգամ ընտրելով միանգամայն մեռած եւ ընդհանրութեան անհասկանալի բառեր:

Շէքսպիրը մեզ՝ անմիջապէս անմատչելի հեղինակ էր, անկախ մեր գրականութեան ծանր վիճակից: Հայ մտաւորականութիւնից անգլիական կրթութիւնը ստացողներ շատ չնչին տոկոս էին կազմում մինչեւ օրս, հրաշք կը լինէր, եթէ այդ չնչին տոկոսը գրականական տաղանդներ տար: Իսկ մեր գաղութային շրջանից մտաւոր եւ գրականական գործիչներ սպասել, մի եւ նոյն է թէ մարողից օգնութիւն: Մասէհեանի երեւոյթը փորձեցիք բացատրել: Շէքսպիրի այս կամ այն երկի թարգմանութեան հաղուագիւտ փորձերը մեզանում բնականաբար նրա ոուսերէն կամ գերմաներէն թարգմանութիւններից պիտի կատարուէին: Այդ կարգի է եւ Ստեփանոս Մալխասեանի Մակբէթի թարգմանութիւնը: Որովհետեւ թարգմանիչը յայտնի հայկարան է, հայկական տաղաչափութեան տեղեակ, նոյն երկի Մասէհեանի նրա թարգմանութիւնների համեմատութիւնը զուրկ չէ կարեւորութիւնից, ի հարկէ միայն գեղարուեստական արժանիքի տեսակէտից:

Մենք իրաւացի չենք համարում պահանջկոտ լինել բնագրի ճշտօրէն վերարտադրութեան վերաբերմամբ մի թարգմանից, որը չէր կարող իւր թարգմանութիւնը կատարել անմիջական աղբիւրից, այլ գերմաներէնից: Արդէն առաջին թարգմանութիւնը մի վերարտադրութիւն է ուրիշ աղբիւրից, ոգու եւ ոճի համաձայն: Բաղմազան եւ սպառնիչ կը լինի համեմատութիւնը, եթէ վերցնենք տարբեր տարբեր բնոյթի տեսարաններ:

Թարգմ. Մակբէթ Մասէհեանի I գործ. Տես. VI Բանքո.	Թարգմ. Մալխասեանի նոյնը.
Ամառուայ հիւրը, տաճար թաթիչ այս ծիծեռնակը	Տաճարանակ ծիծեռնակին իւր սիրելի ներկայութեամբ
Իր սիրականոյց բնակարան նով ապացուցում է,	Յոյց է տալիս, թէ երկնքի հիւրասէր է շունչն այս տեղ:
Թէ երկնքի շունչն իր անոյշ բոյրով գրաւիչ է այս տեղ:	Ոչ մի կամար, կամ առաս- տաղ, ոչ մի սիւն կամ անկիւն
Չը կայ մի ցոլածափ, մի սիւնի գլուխ, մի յարմար անկիւն,	Ազատ չը կան, ուր այս թռչունը չը հիւսէր իւր ճոճացող
Ուր այս թռչունը շինած չը լինի ճոճուն անկողին,	Բոյնիկը եւ ձագերով լի օրօրոցն: Նկատել եմ
Եւ բաղմասերունդ իր օր- օրոցը:	

Այնտեղ ուր նրանք շատ են Որ տեղ որ նա թռչիս
յաճախում եւ ձագ են նստի ու բնակի, այն-
բերում, տեղ միշտ
Ես նկատել եմ, օդն այն Մաքուր է օդն...
տեղ նուրբ է: ...

Այս կտորը սոսկ բնութեան նկարագրութիւն է, — նրա մի յուզիչ վարկեանի, գարնան, մի բոյր, որը ինքն իրեն զգացւում է Մասէհեանի թարգմանութիւնից, մինչդեռ Մալխասեանի թարգմանութիւնից մարդ զգում է թարգմանչի անյոյս տանջանքը նոյն արտայայտելու: Նրա երկրորդ տողը՝ ցոյց է տալիս, որքան երկնքի հիւրասէր է շունչն այստեղ — որքան բռնազօս ոճ է. կամ հինգերորդ տողում նախադասութեան անդամի — ճոճացող բոյնիկը, — երկուսի բաժանումը, կէսը նախընթաց աղբիւր վրջում, կէսը հետեւեալի սկզբում: Եթէ Մալխասեանը չ'անէր չափական թարգմանութեան իւր սխալ փորձը, որպէս լեզուի հմուտ մարդ, չէր ստեղծի բառերի մի այսպիսի տգեղ եւ անմիտ դասաւորութիւն՝ Ուր այս թռչունը չը հիւսէր իւր ճոճացող բոյնիկը եւ ձագերով լի օրօրոցն: Ծիծեռնակը ձագերով լի բոյն չի շինում: Ձագեր նա յետոյ է հանում: Եւ որովհետեւ նա ամեն տարի նոր բոյն չէ շինում, այլ հինը նորոգում է, բնականաբար նրա բոյնի հետ կապուած է նրա անցեալ եւ գալիք սիրնդի պատկերը: Որքան նկարագրական է նոյն տեսարանը Մասէհեանի թարգմանութեամբ՝ «... ուր այս թռչունը շինած չը լինի ճոճուն անկողին եւ բաղմասերունդ իւր օրօրոցը»:

Մալխասեանի թարգմանութիւնը գրուած է հայկական տաղաչափութեամբ, որը կարող էր վտանգել նոյն իսկ բանաստեղծական տաղանդով օժտուածի ստեղծագործութիւնը: Այս բռնազօսիկ չափի (ամանակ) մասին սպառնիչ համոզում կազմելու համար, բաւական է երեւան բերել նրա հիմնական կանոնը, որ մի վանկը ըստ հարկի՝ տողերի համաձայնութեան համար, արտասանելու, պիտի երկարացնել մինչեւ 2, 3 եւ 4 վանկերի տեւողութիւն: Եթէ ասիական կլիկացող երգեցողութեան ժամանակ կարելի է այդ եղանակով տողը տողը հաւասարեցնել, իսկ այդ եղանակով տողը տողը հաւասարեցնել, իսկ կարգալու ժամանակ ինչպէս դուրս գալ գրութիւնից: Իսկ եթէ գրան աւելացնենք այդ չափի միւս կանոնը, որ նախադասութեան անդամները, նոյն իսկ առանձին բառերը կարելի է բաժանել, մի մասը մոծեմ այդ կարծեցեալ չափի մի անդամի մէջ, մնացածը միւս անդամի (իւրաքանչիւր անդամը 4 վանկից պիտի լինի, կամ

արտասանուի որպէս 4, եթէ լրիւ չէ, կարելի է եղըրկացնել, թէ այդ «չափին» հետեւող բանաստեղծութիւնը մինչ ինչ աստիճանի այլանշանկութիւններ կարող է հասնել: Մեր շարահանները շնորհիւ երգեցողութեան, իսկ մի քանիսն երբեք գեղարուեստականութեան՝ ընթացանութեան մինչեւ անգամ դէպքում, այսպէս ասած, ծածկում են մեր լիզուին նմանապէս յատուկ իսկական չափերից՝ իրենց սոյթաբուները: Բայց անկանոնութիւններից կանոններ ստեղծել եւ հետեւել դրանց, դա է զարմանալի: Չձանրանք այս խնդրի վերայ, որ յատուկ վերլուծութեան գործ է: Հարունակներ սկսած բաղդատութիւնը:

Թարգմ. Մասէհեանի.
Ար. II Տես. II

Նոյնը Թարգմ.
Մալխասեանի.

Մակընթ.

Ինչ բարիքն է այս. Ինչ դրան զարկ է:
Այս ինչ եմ դարձել, որ Այս ինչ դարձայ: Ամեն
ամեն շուկ սարսեցնում մի ձայն սարսափ բե-
է ինձ: րում է վերաս
Այս ինչ ձեռքեր են. աչ- Ինչ ձեռներ են այս. Հը.
քերս են հանում. խոցողում են նոքա աչ-
քերս:
Կարող է արդեօք Նեպտունի Դասիդոնի ովիկանոսն այս
ամբողջ մեծ ովիկանոսը արիւնը կը լնա,
Լըւալ այս արիւնն անհետ կը մտնէ իմ ձեռքերից: Իմ ձեռքերից, Իմ մանաւանդ այս ձեռ-
չուտ ներս
Իմ ձեռքն է կարող անթիւ Անհուն ծովերն ծիրանա-
ծովերը բոսորաներկել գոյն կը ներկեն եւ կը
փոխեն
Եւ միապաղաղ կարմիր Զրեւի կանաչ գոյնը կար-
դարձնել ամբողջ կա- միրի:
նաչը:

Մակընթի սարսափը կատարած ոճի զիմաց եւ պատժի գեռ չը վերացած երկիւղը, — Շէքսպիրի նկարագրած դրամատիկ վայրկեաններից ամենից այս ահաւորը իւր բոլոր թափով արտայայտուում է Մասէհեանի թարգմանութեան մէջ. մինչդեռ Մալխասեանի միեւնոյն տեսարանի թարգմանութիւնից տպաւորութիւն ստանալու համար նախ պիտի վերածել արձակի թէկուզ նոյն բառերով: Ահա ինչ դեր է կատարում նրա համար չափաւոր կազմը: Իսկ այսպիսի տեսարանում գործածած «հը» բացառանշանութիւնը, ցաւալի է ասել, որ կարող է եւ ծիծաղ յարուցանել: Որքան անտեղի է գործածուած «մանաւանդ» շարկապը, որը արձակ թարգմանութեան դէպքում ի հարկէ չէր գործածուի նոյն Մալխասեանը: Երբ բանաստեղծական չափով մի գրող ստիպուած է դիմել արուես-

տականութեան, նրա արձակէ միշտ վեր կը լինի նրա բանաստեղծութիւնից:

Թարգմ. Մասէհեանի.
Ար. III Տես. IV

Նոյնը Թարգմ.
Մալխասեանի.

Այն բոլորն ինչ որ մի մարդ Կարող է, կարող եմ եւ ես:
Դուրս եկ իմ առաջ, որպէս Կոշտամաս Ռուսաստանի արջ, Եւ իմ վերաս Ռուսաստանի թաւամաղ արջի ձեւով,
Չինուած ունգեղջիւր, կամ Կամ զրահաւոր ունգեղջիւր, կամ ինչպէս վագր Վրկանի:
Ան որ եւ է ձեւ, բայց ոչ Եկ ինչ դէմքով կամենաս, բացի դրանից, — եւ իմ ջիղերս
Եւ պիտի ջիղերս չեն դողայ Եւ ինձ քո սրով ասպարէզ Եւ հրաւիրի ինձ անապատ կանչի անապատի մէջ... քեզ հետ սրով կուռելու
ցիր,

Այս կտորում մանաւանդ Մասէհեանի լեզուն հասնում է արտաբոյ կարգի ոյժի եւ զարմանալի պարզութեան: Շէքսպիրին հանձնար այս վայրկեանը ստեղծելիս գերմարդկային թռիչք է կատարել: Խղճի խայթոցը ստացել է զարհուրելի արտայայտութիւն, մինչ այն աստիճան, որ անմեղ արիւնների մէջ շախախուած բռնակալի հոգեկան տանջանքը (որը վտանգել է նրա առողջ դատողութիւնը եւ նա տեսնում է իւր զոհի ուրուականը) այդ հոգեկան տանջանքը քիչ է մնում, որ կարեկցութիւն յարուցանի մեր մէջ: Եւ այս տեսարանը որքան թուլացել եւ մէջ: Եւ այս տեսարանը թարգմանութեան տեղումացել է Մալխասեանի թարգմանութեան մէջ: Յայտնի հայկարանը, եթէ չը կաշկանդէր իրեն անհիմն ջանքով ոտանաւորով գրելու այն եւս հայկական տաղաչափութեան կանոններով բարդեցրած, գոնեայ չէր բռնադրօսի լեզուի բնութիւնը եւ միաժամանակ չէր հնարի չեղեալ բնութիւնը: Ինչ ասել է՝ «Մարդ ինչ յատկացուցիչներ: Ինչ ասել է՝ «Մարդ ինչ յատկացուցիչներ է, ես էլ եմ համարձաբանի համարձակում է, ես էլ եմ համարձակում»: Հայերէն լեզուին յատուկ չէ այդպիսի ոճ: Ռոմանտիկը զրահ չունի, նա զինուած է ունգի վերայ բուսած եղջիւրով, որից եւ ստացել է իւր անունը:

Թարգմ. Մասէհեանի.
Ար. V Տես. V

Նոյնը Թարգմ.
Մալխասեանի.

Սէյտոն.

Սէյտոն.

Թագուհին, տէր իմ, մե- Թագուհին, տէր իմ, մե-
ռաւ:

Մակրէթ.

Մակրէթ.

Յետոյ էլ կարող էր մեռնել.

Պէտք է փոքր ինչ ուշ մեռանէր:

Կը դար ժամանակ այս բանի համար:

Այդպիսի խօսք ասելու ժամանակն էլ հարկաւ կը դար

Վաղը, եւ վաղը, եւ դարձեալ վաղը

Երբ եւ իցէ: Եւ վաղը, դարձեալ վաղը, միշտ այս վաղը

Սողում է այնպէս յուշիկ օրէց օր,

Օր բոտ օրէ սող ի սող մօտենում է մանր քայլով

Մինչ վերջին վանկը յիշատագրած գալիք դարերի:

Մեր կեանքի նշանակուած ժամանակի վերջի կէտին:

Եւ այսպէս բոլոր մեր երեկները

Եւ մեր բոլոր երեկներն լուսաւորում են խենթերիս

Լուսաւորել են խենթերի ուղին դէպի փոշոտ մահ:

Մահի ուղին փոշիից, Հեռէք, հանգիւր կարճ լապտեր:

Հանգիւր դու, կարճ մում, կեանքը մի քայլով ստուեր է միւյն,

Կեանքը լոկ թափառական ըստուեր է, մի խեղճ դեբասան,

Մի խեղճ դեբասան, որ բեմի վերայ իւր ժամին տեսում

Որ սեղացած կատարում է իւր ժամը բեմի վերայ

Եւ բորբոքում է. եւ քանակահաստէ ձայնը չի լսում:

Եւ յետոյ մոռացում է յաւիտեան: Խենթի պատմած

Մի հէքեաթ է նա, յիւմարի պատմած,

Մի հէքեաթ է նա, լցուած մեծ գողում գողումով

Լցուած շառաչով եւ կատաղութեամբ առանց իմաստի:

Բայց որ զուրկ է իմաստից:

Կեանքի ողբերգութիւնը իւր օրհասակաւ նին է միայն ըմբռնում Մակրէթը, ինչպէս շատ մեծ ու փոքր Մակրէթներ, նրանից առաջ եւ նրանից յետոյ, որոնք իրենց կեանքի ընթացքում բնական ողբերգութեան աւելացնում են սեփական ձեռքերով ստեղծածները:

Կեանքի ողբերգութիւնը Մակրէթի գիտակցութեան մէջ օրհասականի ցնցման տակ՝ կրկին մի էլէգիայ է, թէկուզ արիւն ուռլտ բրունակալի հոգուց ըսող: Այդ պատճառաւ ներկայ դէպքում էութիւնը եւ բանաստեղծական կեդեւը օրգանական մասն են իրարու: Մասէհեանին յաջողուել է տալ տեսարանը իւր բոլոր թափով ներքինը եւ արտաքինը ներդաշնակ: Իսկ Մալխասեանի թարգմանութիւնը կատարելապէս պրոզայ է, բայց աւաղուած, շնորհիւ նրա չափաւոր ձեւին: Ինչ ծանր ոճէ, նոյն իսկ իրրեւ պրոզա՝ մօտենում է մանր քայլով մեր կեանքի նշանակուած ժամանակի վերջի կէտին. — «կարճ լապտեր», իրրեւ փոխաբերութիւն անտեղի է: Լապտերը ինքը չէ վառւում, այլ մոմը, կամ այս տեսակի դարձուածք՝ «դերասանը կատարում է իւր ժամը» դերասանը ժամը չէ

կատարում եւ ոչ էլ կարելի է կատարել: Նա իւր ժամին իւր դերն է կատարում: Այս տեսակ չափով գրուածները, բանաստեղծութիւն չեն այլ պրոզա, չափից տուեալ: Աղատ գրելով Մալխասեանը լիզուի անհեթեթութիւններ չէր թող տալ իրան, իրրեւ լիզուին լաւ իմացող: Սրանով փակենք համեմատութիւնը:

Համեմատութեան դիմելով, մեր նպատակն էր ցոյց տալ, թէ մինչեւ Մասէհեան կամ միաժամանակ՝ Շէքսպիրի թարգմանութիւնը ինչ վիճակում էր մեզանում: Նրա մի քանի երկերի հայերէն վերարտադրութիւնները հեռու էին մնացել նպատակից եւ մեր գրականութեան մէջ ահագին՝ եւ ինչպէս մի անգամ արտայայտուեցինք, նոյն իսկ չարագուշակ բաց կար, որ այսօր շնորհիւ նոյն ցիղական յարգարարի գալիս է լրացուելու արժանաւոր կերպով եւ իսկական ժամանակին: Արդէն հասունանում են ընթերցողների խիտ եւ լայնածաւալ շտրքեր բուն հայրենիքում, որոնց համար աւելի մեծարժէք պարգեւ դժուար է երեւակայել:

Իսկ եթէ գաղութային հայութեան մէջ չկայ գիտակցութիւն այս մեծ գրական ձեռնարկութեան նշանակութեան մասին, նոյն իսկ հետաքրքրութիւն նրա վերարբերմամբ, շատ բնորոշ է այս երեւոյթը արտաքուստ միայն, եւրոպականացած մեր գաղութներին համար:

Արդեօք առաջ կը բերի Մասէհեանը թարգմանչական մի նոր շրջան, որ բնական պիտի լինէր այսօր, կը հետեւին Շէքսպիրին եւ միւս եւրոպական կատարելատիպերը, — չկանխենք այս հարցի պատասխանը, որը սակայն մեզ համար, անհատօրէն, շատ պարզ է, որովհետեւ դժբախտութիւն ունինք լաւ ճանաչելու մեր իրականութիւնը:

(Վերջ:)

Յ. ՍԱՀԱԹԵՂԻԱՆ

